ԹԵՄԱ 2 ԱՍԻԱ

ԴԱՍ 2.8. Թուրքիայի Հանրապետություն: Աշխարհագրական դիրքը, բնական պայմաններն ու ռեսուրսները, բնակչությունը

• • •

Չափազանց բարենպաստ է ափերը ողողող չորս ծովերի՝ (որո՞նք են) հաղորդակցության էժան ու հարմար միջոցի և կենսաբանական ու ռեկրեացիոն ռեսուրսների վիթխարի շտեմարանի առկայությունը: Դիրքը Եվրոպայի, Սև ծովի ավազանի, Իրանի և արաբական պետությունների միջև Թուրքիային հաղորդում է աշխարհաքաղաքական հատուկ կարևորություն և իր վրա սևեռում գերտերությունների ուշադրությունը:

• • •

Թուրքիայի ՏԱԴ-ի և ՔԱԴ-ի բարելավմանը նպաստեց նաև 1992 թ. նրա նախաձեռնությամբ ստեղծված ***Սևծովյան տնտեսական համագործակցություն*** տարածաշրջանային կազմակերպությունը: Նրա կազմում են Թուրքիան, Հունաստանը, Սերբիան, Հյուսիսային Մակեդոնիան, Ալբանիան, Բուլղարիան, Ռումինիան, Մոլդովան, Ուկրաինան, ՌԴ-ն, Վրաստանը, Հայաստանը, Ադրբեջանը:

Թուրքիայի ընդարձակ տարածքի վրա կարող են տեղավորվել Գերմանիան, Մեծ Բրիտանիան, Դանիան, Նիդեռլանդները, Շվեյցարիան, Բելգիան և Ալբանիան՝ միասին վերցրած:

• • •

Թուրքիայի տարածքը տարբեր ժամանակներում ամբողջությամբ կամ մասամբ եղել է պատմությունից ձեզ հայտնի Խեթական պետության, Ասորեստանի, Հռոմեական կայսրության, Պարթևական թագավորության, Հայկական պետության, Արաբական խալիֆայության, Բյուզանդիայի կազմի մեջ: Այդ տարածքի արևելյան մասում, թուրքերի հայտնվելուց հազարամ-

յակներ առաջ կազմավորվել է հայ ժողովուրդը, ձևավորվել է հայկական պետականությունը, իսկ մինչև 1915 թ. Մեծ եղեռնը հայ բնակչությունը կազ-մել է մեծամասնություն:

• • •

Թուրքիան համեմատաբար հարուստ է *անտառներով*՝ տարածքի 1/4-ը: Դրանք հիմնականում մերձափնյա շրջաններում են և ունեն ինչպես հողա-պաշտպան, ջրապաշտպան, այնպես էլ՝ արդյունաբերական ու ռեկրեացիոն նշանակություն:

Բազմաձյուղ *գյուղատնտեսության զարգացման հնարավորություններ-ը* Թուրքիայում ավելի մեծ են, քան տարածաշրջանի մյուս երկրներում: Մերձափնյա շրջանները բնութագրվում են հարթ ռելիեֆով, բարենպաստ կլիմայով և բերրի հողերով: Դեպի երկրի խորքը կլիման միջերկրածովա-յինից դառնում է ցամաքային, հողերի բերրիությունը նվազում է: Լեռնային ու մասնատված ռելիեֆը դժվարությունների են ստեղծում հողագործության զարգացման համար:

Բերրի սևահողերով աչքի են ընկնում միջլեռնային գոգավորությունները՝ **Մշո**, **Կարնո**, **Դերջանի**, **Երզնկայի**, **Բասենի**, **Մանազկերտի**, **Խարբերդի**, **Մալաթիայի**, **Ալաշկերտի** դաշտերը: Հարուստ ու բազմապիսի են ***ռեկրեացիոն ռեսուրսները:*** Դրանք Թուրքիայի ափերը ողողող ծովերի ավազոտ և արևոտ լողափերն են (օրինակ՝ Անթալիա), գեղատեսիլ լանդշաֆտները, հանքային աղբյուրները, պատմական և ճարտարապետական հուշարձան-ները: Հանքային ջրերով առանձնանում են **Ծաղկանց**, **Հայկական Տավրոս** լեռները, **Բյուրակն** հրաբխային լեռնազանգվածը, Փոքր Ասիա թերակղզու արևմուտքը:

• • •

Պաշտոնական վիճակագրությունը ճշգրիտ տվյալներ չի հրապարակում ազգային փոքրամասնությունների վերաբերյալ, քանզի ազգային պատկա-նելությունն այստեղ նույնացվում է լեզվականին: Թուրք են համարում այդ երկրի բոլոր քաղաքացիներին, ովքեր խոսում են թուրքերեն և դավանում են իսլամ: Թուրքերը կազմում են երկրի բնակչության 90%-ը: Ըստ այդմ էլ ազգային փոքրամասնություններ չկան, կան միայն կրոնական փոքրա-մասնություններ: Իրականում պատկերն այլ է. բնակչության 10%-ից ավե-լին կազմում են քրդերը, արաբները, հույները, հայերը, բուլղարները և այլ էթնոսներ:

Թուրքիայում ապրող երկու տասնյակ ազգային փոքրամասնությունն-

րից առանձնապես սուր են քրդերի և հայերի հիմնախնդիրները: Քրդերը հավաք ապրում են երկրի հարավարևելյան իլերում: Նրանց թիվը տարբեր աղբյուրներում հիշատակվում է 10–35 մլն: Քրդերը թուրքերից հետո երկրորդն են: Քրդերը ձգտում են անկախություն ստանալ և ստեղծել պետականություն:

• • •

Օգտակար հանածոներով տարածաշրջանի առավել լավ ապահովված երկրներից է: Նրա ընդերքում են գտնվում քիմիական կարևոր հումքի՝ բորատների համաշխարհային պաշարների կեսից ավելին: Բորատներից ստացվում է թուրքական հանրահայտ լվացքի փոշին, մանրէասպան դեղորայք և այլն: Թուրքիան հարուստ է քրոմիտներով (համաշխարհային պաշարների 8%-ը), մանգանով, սնդիկով, ծարիրով, գորշ ածխով, շինանյութերով, ծծմբի, կերակրի աղի պաշարներով և այլն:

• • •

Բնակչության ***սեռային կազմում*** գերակշռում են տղամարդիկ: Եթե քաղաքներում շատ են տղամարդիկ, ապա գյուղերում՝ կանայք: ***Տարիքային կազմում*** գերակշռում են մինչև 20 տարեկանները՝ բնակչության 52%-ը: *Բնակչությունն անհավասարաչափ է տեղաբաշխված.* ծովափերին բնակչության միջին խտությունը կրկնակի բարձր է (200–250 մարդ/ք.կմ), քան երկրի միջին ցուցանիշն է՝ 110 մարդ/ք.կմ:

• • •

Նվաճեցին ամբողջ Բալկանները, զգալի տարածքներ՝ **Հյուսիսային Աֆրիկայում**, **Միջագետքը** և այլ տարածքներ: Այն գոյատևեց մոտ հինգ դար և փլուզվեց Առաջին համաշխարհային պատերազմում կրած պարտությունից հետո: Արդյունքում՝ Փոքրասիական ու Հայկական բարձրավանդակների և դրանց հարակից հատվածներն ընդգրկող, նախկինում հույներով ու հայերով բնակեցված տարածքներում էլ 1923 թ. ստեղծվեց Թուրքիայի Հանրապետությունը: Մահմեդական արևելքում դա հանրապետություն հռչակված առաջին երկիրն էր:

• • •

Վերջին տարիներին Թուրքիան Եփրատի վրա կառուցել է մոտ 40 խ.կմ

ծավալով ջրամբար (Սևանա լճի չափ): Լճերը մեծ մասամբ փոքր են ու աղի: Խոշորը **Վանա** լիճն է: Մի շարք լճերից աղ է արդյունահանվում:

• • •

Ներկայիս թուրքերը գրեթե իսպառ կորցրել են թուրքական ցեղերին հատուկ նախնական մարդաբանական (մոնղոլոիդ ռասայի) հատկանիշները, ինչը բնորոշ է թուրքմեններին, ուզբեկներին, ղազախներին, ղըրղզներին: XV–XVI դդ. թուրքերը չունեին միասնական ցեղանուն, դրան փոխարինում էր դավանական՝ մուսուլման անվանումը: Մինչև 1923 թ. այն շարունակում էր կոչվել Օսմանյան կայսրություն (օղուզների ցեղի առաջնորդ Օսմանի անունով):

• • •

Հետաքրքիր է, եթե նրանց թուրք եք համարում, ապա ինչու՞ եք ուզում ոչնչացնել, սպանել: Տխրահռչակ մի «թեզ» էլ Ադրբեջանում է շրջանառվում, որտեղ էլ քրիստոնյա աղվաններին այդ կովկասյան թաթարները համարում են իրենց նախնիները, որոնք էլ իբր ստեղծել են Արցախի հայտնի եկեղեցիները: Եթե ձեր նախնիներն են ստեղծել, ինչու՞ եք տասնամյակներ շարունակ այդ եկեղեցիները ոչնչացնում: Հասկանալի է, որ քրդերն առանձին ազգ են (նրանք իրանախոս են), եկեղեցիներն էլ ստեղծել են հայերը:

• • •

Թուրքիայի հայությանը սփյուռքի մաս դիտելը ճիշտ չէ, չխոսելով արդեն պատմական Հայաստանի մասին: 1915 թ. հայերի նկատմամբ իրականացնելով XX դարի առաջին ցեղասպանությունը, երիտթուրքերի կառավարությունը կոտորեց 1,5 մլն հայ, արտաքսվեցին և բռնի մահմեդականացվեցին հարյուր հազարավոր հայեր: Որոշ տվյալներով՝ Արևմտյան Հայաստանի քաղաքներում և գյուղերում բնակվող և իսլամ դավանող հայերի թիվն անցնում է 2–3 մլն-ից: Պաշտոնական վիճակագրության տվյալներով՝ Ստամբուլում հիմնականում ապրում է շուրջ 80 հազ. հայ: Հայերի ցեղասպանության փաստը ճանաչել է ավելի քան երկու տասնյակ երկիր:

• • •

Գիտե՞ք, որ...

1461 թ. այստեղ հաստատվեց հայոց պատրիարքարան: 1565 թ. այստեղ

հիմնադրվել է հայկական տպարան, որտեղ մինչև այսօր լույս է տեսել 330 անուն պարբերական: Կ.Պոլսում է ձևավորվել (Կ.Պոլսի բարբառի հիմման վրա) արևմտահայ գրական լեզուն, այստեղ են գործել հանճարեղ Կոմիտասը, Հ. Պարոնյանը, Գ. Զոհրապը, Սիամանթոն, Դ. Վարուժանը, Մ. Պեշիկթաշլյանը, Ծերենցը, Թլկատինցին, Ե. Օտյանը, Տ. Կամսարականը, Զ. Եսայանը, Մ.Մեծարենցը, Պ. Դուրյանը, Լ. Շանթը, Ռ. Սևակը, Վ. Թեքեյանը և շատ ուրիշներ: